

ԾՐԱԳՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

1. Ընդհանրական տեղեկատվություն

Երկիր:	Հայաստան
Ծրագրի ամբողջական անվանումը:	«Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագիր
Ընդհանուր արժեքը (\$):	31.25 միլիոն ԱՄՆ դոլար ներառյալ 25 միլիոն ԱՄՆ դոլար ՀԲ (ՎԶՄԲ) ֆինանսավորում և 6.25 միլիոն ԱՄՆ դոլար համաֆինանսավորում
Ծրագրի համարը:	P173318

i. Ծրագրի նկարագրությունը

Ծրագրի նպատակն է Հայաստանում բարձրացնել հանրակրթության և բարձրագույն կրթության որակը՝ (i) խթանելով նախադպրոցական կրթությունը՝ դրա զարգացման համար նախադրյալներ ստեղծելով (ii) բարելավելով դպրոցների տարածքները և ուսումնական գործընթացի պայմանները, (iii) տրամադրելով լաբորատոր գույք և սարքավորումներ հանրակրթական դպրոցներին և (iv) աջակցելով Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ ապահովելով կրթության որակը և համապատասխանությունը:

Ծրագիրը կլինի «Կրթության բարելավում» ծրագրի շարունակությունը, որի ավարտ է սահմանվել 2022 թվականի ապրիլի 30-ը:

Ծրագիրը կշարունակի աջակցել Կառավարության բարեփոխումներին կրթության ոլորտում: Մասնավորապես ծրագիրը կաջակցի. 1) նախադպրոցական

հաստատություններին՝ շարունակելով տրամադրել դրամաշնորհներ և ընդգրկելով ավելի շատ խոցելի խմբեր ծրագրում, 2) ավագ դպրոցների ցանցի և ենթակառուցվածքների բարելավմանը և դրանց հաջող գործունեությանը, 3) հանրակրթության բարելավմանը՝ դպրոցներին կրթական ռեսուրսներով և լաբորատոր սարքավորումներով ապահովելու միջոցով, 4) բարձրագույն կրթության բարեփոխումներին՝ շարունակելով Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) գործունեությունը:

Ծրագիրը կազմված է հետևյալ 3 բաղադրիչներից.

Բաղադրիչ 1. Հանրակրթության որակի բարելավում, որը կազմված է չորս ենթաբաղադրիչներից.

Ենթաբաղադրիչ 1.1. Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում

Ենթաբաղադրիչը կօժանդակի նախադպրոցական կրթության իրականացման նոր՝ ոչ ծախսատար ծառայությունների ներդրմանը, որոնք մատչելի կլինեն բնակչության առավել անապահով խավերին, ինչպես նաև կնպաստեն գործող հաստատություններում երեխաների ընդգրկման աճին:

Նախադպրոցական կրթության մատչելիությունը ՀՀ կառավարության առանցքային գերակայություններից մեկն է: Առանձնակի կարևորվում է նախադպրոցական ավագ տարիքային խմբի՝ չորսից վեց տարեկան երեխաներին տարրական դպրոցին նախապատրաստելու խնդիրը, ինչը կապահովի հավասար մեկնարկային պայմաններ տարրական դպրոցում ուսումը շարունակելու համար, կնպաստի ուսման մեջ առաջընթաց ունենալուն, ինչպես նաև կայուն հիմքեր կստեղծի նրանց անձնային ու սոցիալական հմտությունների զարգացման և ձևավորման համար:

Համակարգի մատչելիության բարձրացումը և երեխաների ընդգրկվածության մեծացումը նախատեսվում է իրականացնել ինչպես գործող նախադպրոցական հաստատությունների ծանրաբեռնվածության մեծացման հաշվին, այնպես էլ

այլընտրանքային, քիչ ծախսատար կրթական ծառայությունների ներդրման միջոցով:

“Կրթության բարելավում” ծրագրի շրջանակներում ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում իրականացվել են 136 միկրոծրագրեր, սակայն նախադպրոցական միկրոծրագրերի և նախակրթարանների հասանելիության հետագա ընդլայնման պահանջարկը դեռևս մնում է բարձր:

«Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում լրացուցիչ ֆինանսավորմամբ (ԼՖ) ՀՀ 80 սոցիալապես անապահով համայնքներում կստեղծվեն նախադպրոցական հաստատություններ, ինչն էլ համահունչ է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրով նախատեսված առաջնահերթություններին:

Ենթաբաղադրիչով նախատեսված գործողություններն են.

- Ուսումնասիրության իրականացում՝ վերհանելով թիրախային համայնքները, որոնք կարող են տրամադրել նախադպրոցական կրթական ծառայություններ, ինչպես նաև կարիքների գնահատում՝ բացահայտելու այն համայնքները, որոնք անկարող են ապահովել համաֆինանսավորում ծրագրում և հետևաբար կարիք ունեն ամբողջական ֆինանսավորման;
- Իրազեկման գործողությունների կազմակերպում համայնքի ղեկավարների, ծնողների և շահագրգիռ կողմերի համար ներկայացնելու երեխաների, այդ թվում նաև հատուկ կարիք ունեցող երեխաների համար նախադպրոցական կրթության հնարավորություններն ու առավելությունները ինչպես նաև միկրոծրագրերի իրականացման ընթացակարգերը: Հաղորդակցման միջոցառումները համայնքի կրթական հաստատությունների շահագրգիռ կողմերի հետ կներառեն տեղեկատվություն շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխություններին դիմակայության և շինարարական աշխատանքներում՝ մեղմացման միջոցառումների վերաբերյալ;
- Հայտերի գնահատում և ընտրություն;
- Միկրոծրագրերի իրականացման համար դրամաշնորհների տրամադրում;
- Նոր նախակրթարաններում ընդգրկված ուսուցիչների և դպրոցների տնօրենների վերապատրաստում;

- Տեխնիկական աջակցության տրամադրում միկրոծրագրերի իրականացման համար՝ ապահովելով հարմարությունների հասանելիությունը և ներառականությունը, շենքերի անվտանգ ֆիզիկական պայմանները, դասասենյակների վերանորոգումը և էներգաարդյունավետ սարքերի և սարքավորումների ձեռքբերումը;
- Ծրագրի մշտադիտարկում և գնահատում:

Միկրոծրագրերը կիրականացվեն Հայաստանի բոլոր մարզերում՝ ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական համայնքներում:

. Ենթաբաղադրիչ 1. 2. Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը

«Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում այս ենթաբաղադրիչն ուղղված էր թիրախային ավագ դպրոցների հիմնանորոգմանը, համապատասխան ուսումնական և ուսուցողական սարքավորումների և այլ լրացուցիչ ռեսուրսների տրամադրմանը: Նախատեսված 17 դպրոցներից ընդհանուր առմամբ 13-ը հիմնանորոգվել են ենթաբաղադրիչի շրջանակներում: 107 ավագ դպրոց համալրվել է ԲՏՃՄ (STEM) առարկաների լաբորատոր սարքավորումներով և կահույքով:

«Կրթության բարելավում» ծրագրի լրացուցիչ ֆինանսավորմամբ կիրականացվի 4 ավագ դպրոցների հիմնանորոգումը՝ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի առաջնահերթություններին համապատասխան:

Ենթաբաղադրիչով նախատեսված գործողություններն են.

- Դպրոցներից յուրաքանչյուրի տեխնիկական վիճակի ուսումնասիրությունը, ներառյալ դրանց սեյսմիկ պայմանների և կլիմայական ռիսկերի վերաբերյալ փորձագետների գնահատականները;
- Հիմնանորոգման նախագծերի վերանայում՝ առաջնահերթություն տալով (i) էներգախնայողությունը և թափոնները կրճատող ջրամատակարարման, ջրահեռացման և հիգիենիկ պայմաններն ու շինարարական մեթոդները, (ii)

հասանելիությունը և ներառականությունը (գեներեր և հաշմանդամություն), ինչպես նաև (iii) կլիմայի նկատմամբ դիմակայուն և ռիսկերը հաշվի առնող հիմնանորոգմանը;

- Հաստատությունների հիմնանորոգում/կառուցում
- Հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ համապատասխան հեղինակային և տեխնիկական վերահսկողության ապահովում;
- Դասասենյակների, ճաշարանների և սպորտային օբյեկտների համար կահույքի և սարքավորումների տրամադրում;
- Վերապատրաստման մոդուլների մշակում և դպրոցների պահպանման վերաբերյալ ձեռնարկների կիրառում,
- Ենթաբաղադրիչով նախատեսված գործողությունների մշտադիտարկում և գնահատում:

Դրոցների հիմնանորոգման ընթացքում հաշվի կառնվեն կլիմայական ռիսկերը: Ենթաբաղադրիչով նախատեսվող գործողությունների վերանայումները կներառեն դպրոցների պահպանման վերաբերյալ տնօրենների վերապատրաստումները, ինչպես նաև հիմնանորոգման նախագծերում էներգախնայողության լուծումների ներառումը:

Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հետ համագործակցության շրջանակներում կվերանայվեն ավագ դպրոցների հիմնանորոգման տեխնիկական նախագծերը և վերջինիս համաֆինանսավորմամբ կտրամադրվեն էներգաարդյունավետ սարքավորումներ: Ներդրումների մասնաբաժինը կկազմի մշակված նախագծային փաստաթղթերում ներառված էներգաարդյունավետ միջոցառումների ընդհանուր արժեքի 20%-ից ոչ ավելի:

Ենթաբաղադրիչ 1.3. Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում

«Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում իրականացվող գործողությունները հիմք հանդիսացան Կրթական Տեխնոլոգիաների Ազգային Կենտրոնի (ԿՏԱԿ) կարողությունների հզորացման, ՏՀՏ ռազմավարության և տվյալների ենթակառուցվածքի մշակման համար (ինչպիսիք են տվյալների հավաքագրումը և ինտեգրումը), որոնք անհրաժեշտ են եղել համակարգի մշտադիտարկման համար: Ծրագրի շրջանակներում ընդհանուր թվով 585 դպրոցի տրամադրվել է համակարգչային տեխնիկա, ՏՀՏ կիրառման ոլորտում վերապատրաստվել են 4475 ուսուցիչներ և վարչական անձնակազմ, իսկ ԿՏԱԿ-ի ազգային կենտրոնի գրասենյակը վերանորոգվել և վերազինվել է՝ գործարկվելով որպես տվյալների մշակման նոր կենտրոն:

Լրացուցիչ ֆինանսավորմամբ այս ենթաբաղադրիչը Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) հետ համատեղ կշարունակի բարելավել ԿԳՄՍՆ կարողությունները՝ վերահսկելու հայաստանյան դպրոցների գործունեության արդյունավետությունը:

Լրացուցիչ ֆինանսավորմամբ նոր գործողությունները կներառեն տվյալների վիզուալիզացիայի գործիքների նոր գործառնությունների մշակում և փորձարկում, որոնք կավելացվեն Կրթության կառավարման և տեղեկատվական համակարգին (ԿԿՏՀ)՝ ավելացնելով համակարգի կիրառելիությունը և բարելավելով կրթության հիմնական արդյունքները:

Ենթաբաղադրիչով նախատեսված գործողություններն են.

- Ուսումնասիրության իրականացում՝ որոշելու հնարավոր ֆունկցիաները, որոնք պետք է ավելացվեն ԿԿՏՀ գործող համակարգին՝ այն ավելի հասանելի և ֆունկցիոնալ դարձնելու, վերլուծությունների հնարավորություններն ավելացնելու և նախկինում որոշված կրթական վերջնարդյունքները բարելավելու նպատակով,
- Տվյալների վիզուալիզացիայի գործիքների մշակում և վավերացում, որոնք օգտատերերի լայն շրջանակի համար հստակ, համապատասխան տեղեկատվություն են մշակում՝ ներառելով նաև տվյալների վերականգնման մեխանիզմներ՝ կլիմայական աղետների պարագայում տվյալների կորուստը նախականիսելու համար,
- Մշակված նոր մոդուլների փորձարկում, մոնիթորինգ և գնահատում,

- Անհրաժեշտության դեպքում տեխնիկական միջոցների գնում՝ մոդուլ (ներ)ը ինտեգրված եղանակով գործարկելու համար,
- Դպրոցներում և հաստատություններում օգտատերերի վերապատրաստում այս համակարգերի միջոցով ստացված տվյալների վերլուծությունն օգտագործելու վերաբերյալ, ինչպես նաև դպրոցի տնօրենների, ուսուցիչների, նախարարության և ԿՏԱԿ-ի անձնակազմի վերապատրաստում՝ կառավարման, ուսուցման և ուսումնառության բարելավված գործընթացների համար ավելացված ֆունկցիայի(ների) օգտագործման վերաբերյալ:

Ենթաբաղադրիչ 1.5

Հանրակրթական դպրոցների վերազինում (լաբորատոր սարքավորումներով և կահույքով)

Դպրոցների վերազինումն ու կահավորումը ներկայումս կրթության առաջնահերթություններից է: Դպրոցների մեծ մասում բացակայում են գիտական լաբորատորիաները, իսկ գործողներն այլևս չեն համապատասխանում ժամանակակից կրթության պահանջներին: Այդ նպատակով առաջնահերթ խնդիր է դպրոցներում ժամանակակից սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով հագեցած բնագիտական և ինժեներական լաբորատորիաների հիմնումը:

«Կրթության բարելավում» ծրագրի ենթաբաղադրիչ 1.2-ի շրջանակներում 107 ավագ դպրոցներ արդեն իսկ համալրվել են բնական գիտությունների առարկաների մասով անհրաժեշտ լաբորատոր սարքավորումներով և կահույքով (ընդհանուր 335 լաբորատորիա): Այս նոր ենթաբաղադրիչը նպատակաուղղված կլինի բարելավել հանրակրթական դպրոցների ուսուցման և ուսումնառության պայմանները՝ մոտ 200 հանրակրթական դպրոցների տրամադրելով բնագիտական և ինժեներական լաբորատոր սարքավորումներ, կահույք և նյութեր:

Ենթաբաղադրիչով նախատեսված գործողություններն են.

- Ուսումնասիրության իրականացում՝ սահմանելով դպրոցների ընտրության չափանիշներ,
- Յուրաքանչյուր դպրոցի կարիքների գնահատում՝ ենթակառուցվածքների առկայությունը (ջրամատակարարում և ջրահեռացում) պարզելու և համապատասխան մեխանիզմներ գործարկելու համար, որպեսզի անհրաժեշտության դեպքում տեղական ինքնակառավարման մարմիններն ապահովեն բազային ենթակառուցվածքները, նախքան սարքավորումներ և կահույք տրամադրելը,
- ԲՏՃՄ առարկաների համար լաբորատոր սարքավորումների տրամադրում, կարևորելով սարքավորումների էներգաարդյունավետությունը, ընտրված դպրոցներում էներգիայի սպառման ծավալները և ջերմոցային գազերի արտանետումները հնարավորության սահմաններում կրճատելու նպատակով,
- Համապատասխան կահույքի տրամադրում,
- Ուսուցիչների և տնօրենների վերապատրաստման նյութերի մշակում ու տրամադրում՝ օգտատիրոջ ձեռնարկի և ցուցադրական տեսանյութերի հետ մեկտեղ, որոնք կվերաբերեն լաբորատոր սարքավորումների շահագործմանը և ընթացիկ սպասարկմանը, ինչպես նաև դասապրոցեսում այս սարքավորումների օգտագործմանը՝ դասավանդման ժամանակակից մեթոդաբանությունների և թվային ուսումնաօժանդակ նյութերի կիրառմամբ:

Բաղադրիչ 2. Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) զարգացմանը

ԿԲԾ-ի շրջանակներում ՆՄՀ-ն աջակցել է ծրագրերին, որոնց նպատակն է եղել բարելավումներ իրականացնել հետևյալ երեք փոխկապակցված ոլորտներում. (ա) համապատասխանությունն աշխատաշուկայի կարիքներին, (բ) կազմակերպչական

արդյունավետություն, (գ) ընդգրկվածության հավասարություն: ՆԱՀ-ի դրամաշնորհները մրցակցային հիմունքներով ուղղվել են բուհերում նորարարական և զարգացման ծրագրերի իրականացմանը, նրանց ընդհանուր կարողությունների՝ դասավանդման և ուսումնառության միջավայրի, հետազոտական կարողությունների և այլնի հզորացմանը: ԿԲԾ-ի շրջանակում իրականացված 18 դրամաշնորհային ծրագրերը, որոնց շահառուներն են եղել 15 բուհեր, նորարարական ծրագրերի միջոցով հնարավորություն են տվել հզորացնել բուհերի կարողությունները:

Բաղադրիչի շրջանակներում կիրականացվեն հետևյալ հիմնական գործողությունները.

- ՆԱՀ-ի դրամաշնորհային հայտերի գնահատման համար անհատ խորհրդատուների ընտրություն;
- ՆԱՀ-ի իրականացմանն աջակցելու համար անհատ խորհրդատուների ընտրություն;
- ՆԱՀ ծրագրերի աուդիտի համար ընկերության ընտրություն

Բաղադրիչ 3. Ծրագրի կառավարում

Այս բաղադրիչի հիմնական նպատակն է շարունակական աջակցություն ցուցաբերել ծրագրի իրականացման գործողությունների, արդյունքների կառավարման և մոնիտորինգի համար: Այս բաղադրիչը կապահովի Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության տակ գործող Կրթական Ծրագրերի Կենտրոն (ԾԻԳ) –ի արդյունավետ գործունեության ֆինանսավորումը և կառավարումը: Այս բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է աուդիտորական կազմակերպության ընտրությունը՝ Ծրագրի աուդիտի իրականացման համար և ծրագրի իրազեկման գործընթացը վարելու համար անհատ խորհրդատուի ընտրությունը, որը իրականացվելու է Կանոնակարգերի համաձայն:

ii. **Ծրագրի Ջարգացման Նպատակներն են՝** բարելավել տարրական դպրոց հաճախող երեխաների դպրոցական պատրաստվածությունը, բարելավել ավագ դպրոցների ֆիզիկական և տեխնիկական պայմանները, ապահովել հանրակրթական դպրոցներում լաբորատոր գույքի և սարքավորումների առկայությունը և աջակցել Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի և համապատասխանության բարելավմանը;

iii. **Արդյունքային ցուցիչներ:**

Ծրագրի զարգացման արդյունքային ցուցիչներն են.

- Բարելավված դպրոցական պատրաստվածություն մասնակից համայնքների առաջին դասարան ընդունվողների շրջանում:
- Ծրագրում ընդգրկված ավագ դպրոցների թվի ավելացում, որոնք համապատասխանում են ՀՀ շինարարական և անվտանգության չափանիշներին:
- Ծրագրի շրջանակներում լաբորատոր գույքով և սարքավորումներով հագեցած հանրակրթական դպրոցների թվի ավելացում:
- ՆԱՀ-ի շրջանակներում ստեղծված դրամաշնորհների մասնաբաժինը:

2. Երկրի, վարկառուի և շուկայի ռազմավարական գնահատում

Գործառնական Համատեքստ

- **Կառավարման հայեցակետեր**

Հայաստանը անկախ ժողովրդավարական հանրապետություն է: Ծրագրի իրականացման առումով օրենսդրական տեսանկյունից հատուկ սահմանափակումներ չեն նախատեսվում: Համաճարակի հետևանքները, որոնք ներառում են սոցիալական և տնտեսական անկայունություն և Covid-19-ի արդյունքում շարունակական կանխարգելիչ գործողությունների

անհրաժեշտություն, անկանխատեսելի են, հետևաբար, կարող են վտանգ ներկայացնել ծրագրի որոշ կետերի պլանավորված իրականացման համար:

- **Տնտեսական հայեցակետեր**

2020 թվականի ճգնաժամերի հետևանքները՝ կորոնավիրուսի համաճարակը, դրանով պայմանավորված համաշխարհային տնտեսական ճգնաժամը և Ադրբեյջանի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմը ծանր հարված հասցրեցին Հայաստանի տնտեսությանը՝ ընդհատելով տնտեսական աճի բարձր տեմպերը: 2020 թվականն ավարտվել է 7,4 տոկոս տնտեսական անկմամբ: Չնայած առկա մարտահրավերներին, տնտեսության առումով 2021 թվականի առաջին 6 ամիսները բավականին հուսադրող են եղել: Մասնավորապես, հունվար-հունիս ամիսներին գրանցվել է տնտեսական ակտիվության 5,0%, իսկ հունիսին՝ 8,0% աճ: Ըստ ԱՄՀ-ի՝ 2020 թվականի ռեցեսիայից հետո Հայաստանի տնտեսությունը թևակոխել է կայուն վերականգնման փուլ, թեև առկա մարտահրավերները շարունակվում են: Ակնկալվում է, որ Covid 19-ի համաճարակային իրավիճակի բարելավումը, սպառման ընդլայնումը, ինչպես նաև պետական-մասնավոր ներդրումների աճը կխթանեն տնտեսական աճը 2022 թվականին:

- **Կայունության հայեցակետեր**

Վերջին տարիներին հայաստանյան քաղաքականության և որոշում կայացնողների կողմից բնապահպանական քաղաքականությանը հատկացվում է մեծ ուշադրություն՝ գիտակցելով, որ կայուն զարգացումը ենթադրում է քաղաքականության խորքային փոփոխություններ, որոնք խթանում են արտադրության, սպառման և վարքագծային օրինաչափությունների համակարգային վերափոխումները: Ծրագիրը կներկայացնի գնումների կայուն ասպեկտներ, մասնավորապես, ծրագրում հատուկ ուշադրություն կդարձվի էներգախնայողությանը: Ծրագիրը կաջակցի տեղադրվող սարքավորումների էներգախնայողության մեծացմանը, Ծրագրի շրջանակներում ձեռք բերված

հեռահաղորդակցության սարքավորումները կգնահատվեն որպես էներգաարդյունավետ՝ ըստ առկա համաշխարհային ընդունված ստանդարտների:

- **Տեխնոլոգիական հայեցակետեր**

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 200 դպրոցների համար բնագիտական և ինժեներական լաբորատոր սարքավորումների, նյութերի, պարագաների ու կահույքի, ինչպես նաև համակարգիչների ձեռքբերում:

ԿԾԿ կարողությունները և գնահատումը

- Փորձ

«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը պատասխանատու է Կրթական ծրագրերի կենտրոնի (ԿԾԿ) աջակցությամբ ծրագրի իրականացման համար, որը գործում է որպես Ծրագրերի իրականացման միավոր: ԿԾԿ-ն նախարարության ներքո գործող ծրագրերի իրականացման գրասենյակ է: Այն հիմնադրվել է 1996թ.-ին և զգալիորեն հզորացել է Բանկի ֆինանսավորմամբ կրթական ծրագրերի իրականացման միջոցով (ներառյալ վերջին «Կրթության բարելավում» ծրագիրը (ԿԲԾ)): Առաջարկվող ծրագիրը կլինի «Կրթության բարելավում» ծրագրի շարունակությունը: Սույն ծրագիրը հանդիսանում է հիմնական ծրագրի՝ ԿԲԾ-ի լրացուցիչ ֆինանսավորում: Լրացուցիչ ֆինանսավորումը հիմնականում կառուցված է ԿԲԾ-ի իրականացման հզոր փորձի վրա: ԿԾԿ-ն կշարունակի իր գործունեությունը տնօրինման, համակարգման, իրականացման, ծրագրի տեղեկատվության տարածման և հաղորդակցման վերահսկման, առաջարկվող ծրագրի գործողությունների մշտադիտարկման և գնահատման, ինչպես նաև ծրագրի շրջանակներում որոշումների կայացման գործընթացներին աջակցման ուղղությամբ: ԿԾԿ-ն նաև պատասխանատու կլինի գնումների և ֆինանսական ղեկավարման գործառույթներում, ֆինանսական հոսքերի, բյուջետավորման, հաշվապահության և հաշվետվողականության համար: Առաջարկվող ծրագրի

իրականացման համար ԿԾԿ-ն կազմված է մասնագիտական, վարչական և օժանդակող փորձառու աշխատակիցների հիմնական խմբից:

Գնումների գործընթացը կիրականացվի համաձայն Գնումների Կանոնակարգեր Ներդրումային ծրագրերի ֆինանսավորման (IPF) վարկառուների համար թվագրված հունիս 2016, վերանայված նոյեմբեր 2017, օգոստոս 2018 և նոյեմբեր 2020 (այսուհետ կարգավորումներ); գնումների գործընթացները կիրականացվեն Գնումների փոխփոխությունների համակարգված դիտարկման STEP առցանց հարթակի միջոցով: ԿԾԿ մասնագետները Բանկի գնումների և ծրագրի կառավարման գործընթացների կիրառման փորձ ունեն: Սակայն, ծրագրի արդյունավետ իրականացման նպատակով ծրագրի իրականացման ընթացքում գնումների և ծրագրի կառավարման ուղղությամբ ԿԾԿ աշխատակազմի կարճաժամկետ խորհրդատվությունների և վերապատրաստումների տրամադրման կարիք կլինի: Ծրագրի շրջանակներում պետք է կիրառվի նաև «ՎՋՄԲ վարկերի և ՄՋԸ-ի վարկերի և դրամաշնորհների միջոցով ֆինանսավորվող ծրագրերում խարդախության և կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի ուղեցույցները», թվագրված 15 հոկտեմբերի 2006թ. և վերանայված 2011թ.-ի հունվարին և 2016թ.-ի հուլիսի 1-ին:

- Պայմանագրերի կառավարման կարողություն ներ և հզորություններ ԿԾԿ-ն պատասխանատու է ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրերի կառավարման համար: Ծրագրի աշխատակազմը պատասխանատու է համապատասխան պայմանագրերի ընդհանուր կառավարման համար, մասնավորապես՝ պայմանագրերի շրջանակներում գործողությունների համակարգման, հաշվետվությունների և վերջնարդյունքների ընդունման և հաստատման համար:

- Բողոքների կառավարման և վեճերի լուծման համակարգեր

ԿԾԿ-ն պետք է խստորեն հետևի գնումներին վերաբերող բողոքների ընթացակարգերին՝ համաձայն Կանոնակարգերի և կիրառված մրցութային փաստաթղթերի:

Շուկայի վերլուծություն

Շուկայի վերլուծության համար առաջին հերթին հիմք են հանդիսանում նմանատիպ մրցույթները, որոնք վերջերս անցկացվել են ԿԾԿ-ի կողմից:

«ԵՄ-ն հանուն նորարարության» ծրագրի շրջանակներում գիտական լաբորատոր սարքավորումների ձեռքբերման մրցույթն անցկացվել է Հայտերի հարցման(բաց, միջազգային) եղանակով: Մի շարք ընկերություններ հետաքրքրություն են ցուցաբերել և հայտ են ներկայացրել: Հաշվի առնելով, որ գնման ենթակա ապրանքները հիմնականում նույնանման են, մրցույթի արդյունքները կդառնան նաև նոր մրցույթների ծախսերի նախահաշիվը մեծ ճշգրտությամբ հաշվարկելու հիմք: Միջազգային շուկայում տեղի ունեցած փոփոխությունների պատճառով դյուրակիր համակարգիչների գնման մրցույթներից մեկը չի հաջողվել: Չեղարկման հիմնական պատճառը արդյունավետ մրցակցության բացակայությունն էր: Վերլուծությունների վրա հիմնված մրցակցության բացակայությունը պայմանավորված էր ապրանքների առաքման համար նախատեսված 30 օրվա ժամկետի անբավարարությամբ: Հաշվի առնելով բարձր տեխնոլոգիաների և ընդհանուր շուկայի ներկա իրավիճակը՝ որոշվել է ավելի շատ ժամանակ տրամադրել ապրանքների առաքման համար՝ առնվազն 90-120 օր, մատակարարների համար ստեղծելով ավելի հուսալի պայմաններ, ինչն իր հերթին կմեծացնի մասնակցության և հետևաբար մրցակցության նկատմամբ հետաքրքրությունը:

«ԵՄ-ն հանուն նորարարության» ծրագրի շրջանակներում անցկացվել է նաև համակարգչային տեխնիկայի գնման մրցույթ: Մրցույթը հաջող է անցել, և ստացվել է չորս հայտ, ինչի շնորհիվ հնարավոր է եղել գնահատել գնված սարքավորումների գծով փաստացի շուկայական առաջարկը:

Շուկայի վերլուծության հիման վրա եկանք այն եզրակացության, որ լաբորատոր և համակարգչային սարքավորումների այսօրվա շուկան կայուն չէ, ինչը լրացուցիչ ռիսկեր է ստեղծում: Հաշվի առնելով, որ պահանջվող ապրանքների զգալի մասը չի արտադրվում տեղական շուկայում և պետք է ներմուծվի, չկա այլ տարբերակ, քան փոխադրումների և ապրանքների առաքման հետ կապված ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելը: Covid-19-ի և տրանսպորտային խնդիրների հետ կապված համաշխարհային մակարդակով սահմանափակումների պահպանման պատճառով ռիսկը նվազեցնելու հիմնական քայլը ապրանքների առաքման համար բավարար ժամանակ տրամադրելն է:

Ինչ վերաբերում է ավագ դպրոցների հիմանորոգման մրցույթներին, ԿԾԿ-ն ստեղծել է շինարարական ընկերությունների տվյալների բազա, որոնք մասնակցել են «Կրթության բարելավում» ծրագրով նախատեսված վերականգնողական աշխատանքների ոլորտում անցկացված մրցույթներին: Ընդհանուր առմամբ վերանորոգվել է 13 ավագ դպրոց, որոնց կապալառուները տեղական ընկերություններ են: Պայմանագրերի կատարման ընթացքում պայմանագրերում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ՝ ավարտման ժամկետի երկարացում, ծավալների և լրացուցիչ աշխատանքների փոփոխություն, պայմանագրի ընդհանուր գումարի ավելացում, նվազում և այլ: Պայմանագրի ժամկետի երկարացման հիմնական պատճառը եղել է Covid-19-ով պայմանավորված աշխատանքային պարապուրդը և սահմանափակումները: Ծավալների փոփոխությունները, ինչպես նաև լրացուցիչ աշխատանքների անհրաժեշտությունը ազդում են պայմանագրի արժեքի փոփոխության վրա: Հիմնանորոգման աշխատանքների ընթացքում առաջացել է փոփոխությունների անհրաժեշտություն, որը հաստատվել է հեղինակային հսկողություն իրականացնող նախագծային ընկերության կողմից՝ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության հետ համաձայնեցված:

Հաշվի են առնվել ԿԾԿ-ի նախորդ փորձի ընթացքում ձեռք բերված արդյունքները՝ հիմնականում դպրոցների կապիտալ վերանորոգման,

լաբորատոր և համակարգչային սարքավորումների ձեռքբերման գծով, որոնք իրականացվել են «Կրթության բարելավում» և «ԵՄ-ն հանուն նորարարության» ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև այլ գործողությունների համար ԿԾԿ-ին հասանելի տվյալների բազան: Նախ միջազգային որևէ ընկերությունից 7 ավագ դպրոցների հիմնանորոգման մրցույթի համար հայտեր չեն ներկայացվել, թեև մրցույթն անցկացվել է Միջազգային մրցակցային գնման եղանակով և 7 լոտերով, ընդ որում մրցույթի ընդհանուր արժեքը կազմել է 12,9 մլն ԱՄՆ դոլար: Ուստի, առկա է մեծ անորոշություն, արդյոք իմաստ կա՞ Միջազգային մրցակցային գնման եղանակով անցկացնել 4 ավագ դպրոցների հիմնանորոգման մրցույթը, հաշվի առնելով նախկին մրցույթի արդյունքը, գումարած Covid-19-ի սահմանափակումների պատճառով առաջացող նոր խնդիրները: Թեև ապրանքների գնման դեպքում ապրանքների առաքման համար ավելի շատ ժամանակ տրամադրելը ինչ-որ կերպ նվազեցնում է ռիսկերը, և մեծացնում մասնակցությունը, սակայն աշխատանքների գնման դեպքում, դա ոչ այնքան արդյունավետ է, քանի որ դպրոցների հիմնանորոգման աշխատանքների տևողության համեմատ Ծրագրի տևողությունը ավելի կարճ է:

«4 ավագ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողություն» գործողության ծախսերի նախահաշվի հաշվարկման համար օգտագործվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հաստատված տեխնիկական հսկողության աշխատանքների հաշվարկման սանդղակը:

Ներկայումս հնարավոր չէ կանխատեսումներ անել մատակարարման շղթայի վերաբերյալ տարածաշրջանում շարունակվող ռազմական գործողությունների ազդեցության վերաբերյալ:

Չորս ավագ դպրոցների տեխնիկական նախագծերի վերանայման և հեղինակային հսկողության համար կընտրվի կազմակերպություն՝ որակի և գնի վրա հիմնված ընտրության /QCBS /մեթոդով:

Գնումների ընթացակարգերը մշակվել են նախկին փորձի հիման վրա՝ հաշվի առնելով համապատասխան շուկաների ընթացիկ ռիսկերը: Նախորդ մրցույթների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ կան նաև կահույքի մատակարարման մրցույթներով հետաքրքրված ընկերություններ, սակայն աշխարհում տնտեսական և քաղաքական փոփոխությունների տեմպերը ավելի ու ավելի անորոշություն են ստեղծում տեղական և միջազգային ընկերությունների համար, ինչը պետք է հաշվի առնել ծրագրի իրականացման ընթացքում:

3. Գնումների ռիսկերի վերլուծություն

Առաջարկվող Ծրագրի իրականացման ընդհանուր ռիսկը չափավոր է: Գնումների հիմնական ռիսկերն են..

Ռիսկերի նկարագրություն	A	B	Ընդհանուր ռիսկի վարկանիշ (A*B)	Գնումների գործընթացի միջոցով առաջարկվող մեղմացնող գործողությունների նկարագրություն	Ռիսկի սեփականատեր/կրող
	Հավանականության վարկանիշ	Ազդեցության վարկանիշ			
Գնվող ապրանքների տեխնիկական բնութագրերի պատրաստման ուշացումներ և կարողությունների բացակայություն:	1	2	2	Փորձագետների ընտրություն, որոնք կաջակցեն տեխնիկական բնութագրերի պատրաստմանը:	ԿԾԿ
COVID 19 համաճարակի անկանխատեսելիություն	3	4	12	Տրամադրել համապատասխան ճկուն և	ԿԳՄՄՆ, ԿԾԿ

<p>ունը կարող է առաջացնել աշխատանքների և մատակարարման գործընթացների խաթարում, ինչը կարող է ազդել ապրանքների առաքման, ինչպես նաև հիմնանորոգման աշխատանքների ընթացքի վրա:</p>				<p>շարունակական լուծումներ առաջացող խնդիրներին:</p>	
---	--	--	--	---	--

4. Շահառուների վերլուծություն

Շահառուների վերլուծության հիման վրա ծրագիրն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կներգրավի հիմնական շահառու կողմերին, որոնք ներկայացված են ստորև.:

Շահառու կողմերի կառավարման պլան			
Շահառու (անունը և դերը)	Ընդգրկվածությունը (պատասխանատու, հաշվետու, խորհրդակցված, տեղեկացված)	Շահառուների նպատակները գնումների տեսանկյունից	Շահառուների կառավարման մոտեցում

<p>ԿԳՄՄՆ</p>	<p>Խորհրդակցված, տեղեկացված</p>		<p>Տեղեկատվական հանդիպումներ, հաղորդագրություններ էլեկտրոնային փոստով, հեռախոսով; Ծրագրի հարցումների մեջ որպես հարցազրույցի մասնակիցների ընդգրկում:</p>
<p>ԿԶՆԱԿ (Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն)</p>	<p>Տեղեկացված</p>	<p>Ծրագրի ընկալումը օգուտ կբերի դպրոցներում հանրակրթության բարելավմանն ուղղված նրանց գործունեությանը:</p>	<p>Տեղեկատվական հանդիպումներ, ֆոկուս խմբային քննարկումներ հարցումներ, վերապատրաստման ծրագրեր, կարիքների գնահատման ուսումնասիրություններ:</p>
<p>ԿՏԱԿ (Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն)</p>	<p>Խորհրդակցված, տեղեկացված</p>	<p>Ծրագրի/գնումների մոնիտորինգի իրականացում և հաշվետվություններ ի ներկայացում:</p>	<p>Տեղեկատվական հանդիպումներ, կարիքների գնահատման պարբերական խորհրդատվություններ, Ծրագրերի հետ կապված պարբերական խորհրդատվություններ, հարցումներ,</p>

			դասընթացներ:
Ուսումնական հաստատություններ, դպրոցներ, ԲՈՒՀ-եր	Խորհրդակցված	Ծրագրի/գնումների մոնիտորինգի իրականացում և հաշվետվությունների ներկայացում, ընդգրկվածություն դասընթացների կազմակերպում՝ ներգրավելով իրենց մարդկային ռեսուրսները:	Ծրագրի կողմից ֆինանսավորվող վերապատրաստման դասընթացներ, հարցումներ, ֆոկուս խմբեր և հարցազրույցներ:
Ուսուցիչներ	Խորհրդակցված	Հմտությունների զարգացման վերապատրաստումներ	Վերապատրաստման ծրագրեր, տեղեկատվական հանդիպումներ, շնորհանդեսներ, աշխատաժողովներ
Այլ շահառու կողմեր	Տեղեկացված	Աշխատանքի հնարավորություններ, բիզնես հնարավորություններ պայմանագրերի կնքում կապալառուների հետ:	Տեղեկատվական հանդիպումներ, շնորհանդեսներ

Ծրագրի իրականացման ողջ ընթացքում կապահովվի հետադարձ կապ և կանոնավոր խորհրդատվություն շահառուների միջև: Շահառու կողմերի կառավարման մոտեցումը կներառի նաև վիրտուալ ձևաչափով տեղեկատվական հանդիպումները, էլեկտրոնային

փոստի, հեռախոսի միջոցով իրազեկումը, ծրագրի հարցումներին որպես պատասխանողների ներգրավում, ծրագրի կողմից ֆինանսավորվող վերապատրաստման ծրագրեր, հարցումներ, ֆոկուս խմբեր և հարցազրույցներ, գնահատման ուսումնասիրություններ և այլն:

5. Գնումների նպատակը

Ծրագրի գնումների հիմնական նպատակն է ապահովել գնումների համապատասխանությունը Կանոնակարգերին՝ սահմանելով գնումների պատշաճ գործընթացներ՝ ավագ դպրոցների վերանորոգման և դպրոցները լաբորատոր սարքավորումներով, համակարգիչներով և կահույքով մատակարարելու համար, ինչպես նաև համապատասխան որակով և մրցունակ շուկայական գներով խորհրդատվական ընկերության ընտրություն՝ աուդիտ իրականացնելու համար:

6. Ծրագրի շրջանակներում առաջարկվող գնումների գործընթացները

Նախատեսվող գնումների/ընտրության գործառույթները կիրականացվեն համաձայն «Գնումների Կանոնակարգեր Ներդրումային ծրագրերի ֆինանսավորման (IPF) վարկառուների համար» («Կանոնակարգեր») դրույթներով (թվագրված 2016թ. հուլիս, վերանայված 2017թ. նոյեմբեր, 2018թ. օգոստոս և 2020թ. նոյեմբեր):

Կկիրառվեն խորհրդատվական ծառայությունների ընտրության հետևյալ մեթոդները.

(i) Անհատ խորհրդատուների ընտրություն

Կկիրառվեն փոքր առաջադրանքների համար նախատեսված միանվագ գումարի և ժամանակի վրա հիմնված վճարումների պայմանագրերի ձևերը (ՎԶՄԲ/ՄԶԳ կողմից ֆինանսավորվող թվագրված օգոստոսի 2014թ.), որը կհամապատասխանեցվի Բանկի կիրառելի կանոնակարգերի սկզբունքներին և պահանջներին:

(ii) Խորհրդատուի որակավորման վրա հիմնված ընտրություն

Կօգտագործվեն 2021 թվականի ապրիլին թվագրված SRFP ընտրության ներքո տեխնիկական և ֆինանսական առաջարկները՝ համապատասխան ճշգրտումներով:

(iii) Նվազագույն ծախսերի վրա հիմնված ընտրություն

Կօգտագործվի խորհրդատվական ծառայությունների համար նախատեսված Առաջարկների ներկայացման հրավերի՝ մրցութային փաստաթղթի օրինակելի ձևը ,/ բացառությամբ տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների/ վերանայված 2021 թվականի ապրիլին:

Ապրանքների գնման համար կկիրառվեն հետևյալ մեթոդները.

(iv) Ապրանքների գնում – Հայտերի ներկայացման Հրավերի/RFB/ մեթոդ /շուկայական մոտեցում՝ բաց, ազգային/

Կկիրառվի ArmEPS-ի համար նախատեսված 2021 թվականի հունիսի գնման փաստաթղթի օրինակելի ձևը, որը համապատասխանաբար կճշգրտվի:

(v) Ապրանքների գնում – Հայտերի ներկայացման Հրավերի/RFB/ մեթոդ /շուկայական մոտեցում՝ բաց, միջազգային/

Հայտերի ներկայացման հրավերի համար նախատեսված Մրցութային փաստաթղթի օրինակելի ձև. (մեկ ծրարով հայտերի ներկայացման գործընթաց), որը վերանայվել է 2021 թվականի հունիսին: Փաստացի կարիքների և նպատակներին հասնելու քայլերի հիման վրա կարիքների գնահատման ավարտից հետո կհստակեցվեն համապատասխան փաստաթղթերը, որոնք պետք է օգտագործվեն IS-ի գնման համար:

Աշխատանքների գնման համար կկիրառվեն հետևյալ մեթոդները.

(v) Աշխատանքների գնում – Հայտերի ներկայացման Հրավերի մեթոդ /շուկայական մոտեցում՝ բաց, ազգային/.

Կօգտագործվի ArmEPS-ի համար ընդունված 2021 թվականի հունվարի գնման փաստաթղթի օրինակելի ձևը, որը համապատասխանաբար կճշգրտվի:

Մրցութային գործընթացների կազմակերպման համար /շուկայական՝ բաց, ազգային/ ԿԾԿ-ն կօգտագործի ARMEPS համակարգը, որի միջոցով կիրականացվի գործընթացների հայտարարումը, հայտերի ստացումը և բացումը:

Ծրագիրը իրականացման ընթացքում կկիրառվի գնումների (STEP) էլեկտրոնային հարթակը: Գնումների պլանը Բանկի հետ համաձայնեցնելուց հետո կներբեռնվի STEP համակարգում :

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև պայմանագրերի նախակնքում:

Ստորև թվարկված գործողությունների համար Վարկառուն/ԿԾԿ-ն կշարունակի գնումների գործընթացը մինչև Վարկային համաձայնագրի ստորագրումը: Բանկի Ներդրումային ծրագրերի ֆինանսավորմանը (IPF) իրավունակ լինելու համար ԿԾԿ-ն ապահովում է գնումների ընթացակարգերի, ներառյալ հայտարարման/հրապարակման համապատասխանությունը Կանոնակարգի 1-3 բաժիններին: Վարկառուն/ԿԾԿ-ն իրականացնում է նման նախագնումներն իր պատասխանատվությամբ, և Բանկի կողմից պայմանագրի շնորհման ընթացակարգերի, փաստաթղթերի կամ առաջարկի հետ կապված ցանկացած համաձայնություն Բանկին չի պարտավորեցնում ֆինանսավորել տվյալ նախագիծը:

Պայմանագրերի նախակնքումը կիրառելի է ստորև նշված գործողությունների համար, թեև ցանկը կարող է փոփոխվել ընթացիկ կարիքների/իրավիճակի հիման վրա.

- 4 ավագ դպրոցի ճարտարապետական, տեխնիկական նախագծերի վերանայում և հեղինակային հսկողություն /Կետ 1.2.3/
- Ինժեներ-խորհրդատու /Կետ 1.1.1/
- Կարիքների գնահատում, տեխնիկական աջակցություն Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (EMIS) և վիզուալիզացիայի գործիքների թարմացման համար /Կետ 1.3.1/
- Տեխնիկական աջակցություն՝ լաբորատոր սարքավորումների ձեռքբերման և տեխնիկական գնահատման մասնագրերի մշակման համար /Կետ 1.5.4/
- ՆՄՀ դրամաշնորհային հայտերի գնահատում /Կետ 2.1/
- Ծրագրի լուսաբանման մասնագետ/Կետ 3.2/
- Ծրագրի բնապահպանական հարցերով մասնագետ /Կետ 3.3/

Ծրագրի շրջանակներում ձեռք կբերվեն հետևյալ աշխատանքներն ու ծառայությունները.

Գործունեության նկարագրությունը i) 4 ավագ դպրոցի կապիտալ վերանորոգում. ii) տեխնիկական հսկողություն. iii) 4 ավագ դպրոցների նախագծերի վերանայում և հեղինակային հսկողություն. iv) դպրոցների համար լաբորատոր, համակարգչային սարքավորումների և կահույքի գնում. v) աուդիտորական կազմակերպության ընտրություն՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնելու համար, vi) անհատական խորհրդատուների ընտրություն՝ կարիքների գնահատման և EMIS-ի և վիզուալիզացիայի գործիքների թարմացման գծով տեխնիկական աջակցություն համար: Գնումների մանրամասները և պայմանավորվածությունները նախատեսված են ստորև ներկայացված գնումների պլանում:

Գործողությունների կատեգորիա. Աշխատանքներ, Ապրանքներ, Խորհրդատվական ծառայություններ

Նախընտրելի կազմակերպման ձևը մեծ արժեք ունեցող գործողությունների դեպքում

Առաջարկվող գնումների կազմակերպման ձևերը ծրագրի յուրաքանչյուր գործողության համար ներկայացված են ստորև.

Գործողություն	Կատեգորիա	Նախահաշվային արժեք /ԱՄՆ դոլար/	Մրցույթի կազմակերպում	Ընտրության եղանակը	Պայմանագրի տեսակը
Լաբորատոր սարքավորումների և նյութերի ձեռքբերում ՀՀ հյուսիսային տարածաշրջանի դպրոցների համար	Ապրանքներ	4 000 000	Բաց, միջազգային	Հայտերի ներկայացման Հրավեր /RFB/	Ֆիքսված գին
Լաբորատոր սարքավորումների և նյութերի ձեռքբերում ՀՀ հարավային տարածաշրջանի դպրոցների համար	Ապրանքներ	3 885 000	Բաց, միջազգային	Հայտերի ներկայացման Հրավեր /RFB/	Ֆիքսված գին
Լոռու մարզի Վանաձորի թիվ 13 ավագ դպրոցի հիմնանորոգում	Աշխատանքներ	3 360 000 /ենթակա է վերանայման/փոփոխության նախագծա նախահաշվային փաստաթղթերի վերանայման ավարտից հետո/	Բաց, ազգային	Հայտերի ներկայացման Հրավեր /RFB/	<p>Հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար նախատեսված ժամկետը 30 ամիս է, ինչը շատ մոտ է ծրագրի ընդհանուր տևողությանը, որը 36 ամիս է</p> <p>Աշխատանքների իրականացման պայմանագիր գնի ճշգրտմամբ</p>
Երևանի թիվ 139 ավագ դպրոցի կառուցում	Աշխատանքներ	4 500 000 /ենթակա է վերանայման/փոփոխության	Բաց, ազգային	Հայտերի ներկայացման Հրավեր /RFB/	<p>Հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար նախատեսված ժամկետը 32 ամիս է, ինչը շատ մոտ է ծրագրի ընդհանուր</p>

		նախագծա նախահաշ վային փաստաթ ղթերի վերանայմ ան ավարտից հետո/			տևողությանը, որը 36 ամիս է Աշխատանքների իրականացման պայմանագիր գնի ճշգրտմամբ
Արարատի մարզի Արտաշատի թիվ 4 ավագ դպրոցի հիմնանորոգում	Աշխատ անքներ	2 040 000 /ենթակա է վերանայմ ան/փոփո խությանն ախագծան ախահաշվ ային փաստաթ ղթերի վերանայմ ան ավարտից հետո/	Բաց, ազգային	Հայտերի ներկայաց ման Հրավեր/R FB/	Աշխատանքների իրականացման պայմանագիր գնի ճշգրտմամբ
Արագածոտն մարզի Աշտարակի թիվ 5 ավագ դպրոցի հիմնանորոգում	Աշխատ անքներ	2 800 000 /ենթակա է վերանայմ ան/փոփո խության նախագծա նախահաշ վային փաստաթ ղթերի վերանայմ ան ավարտից հետո/	Բաց, ազգային	Հայտերի ներկայաց ման Հրավեր /RFB/	Աշխատանքների իրականացման պայմանագիր գնի ճշգրտմամբ

**Նախընտրելի կազմակերպման ձևը ցածր արժեք, ցածր ռիսկ պարունակող
գործողությունների դեպքում**

Գործողություն	Կատեգորիա	Նախահաշվային արժեք	Գնումների կազմակերպման ձևը	Պայմանագրի տեսակը
---------------	-----------	--------------------	----------------------------	-------------------

Լաբորատոր գույքի ձեռքբերում ՀՀ հյուսիսային տարածաշրջանի դպրոցների համար	Ապրանքներ	800 000	Հայտերի ներկայացման Հրավեր /RFB/ /բաց, ազգային/	Ֆիքսված գին
Լաբորատոր գույքի ձեռքբերում ՀՀ հարավային տարածաշրջանի դպրոցների համար	Ապրանքներ	700 000	Հայտերի ներկայացման Հրավեր /RFB/ /բաց, ազգային/	Ֆիքսված գին
Համակարգչային սարքավորումների ձեռքբերում ՀՀ հյուսիսային տարածաշրջանի դպրոցների համար	Ապրանքներ	800 000	Հայտերի ներկայացման Հրավեր /RFB/ /բաց, միջազգային/	Ֆիքսված գին
Համակարգչային սարքավորումների ձեռքբերում ՀՀ հարավային տարածաշրջանի դպրոցների համար	Ապրանքներ	700 000	Հայտերի ներկայացման Հրավեր /RFB/ /բաց, միջազգային/	Ֆիքսված գին
Գույքի ձեռքբերում հիմնանորոգված դպրոցների համար	Ապրանքներ	500 000	Հայտերի ներկայացման Հրավեր /RFB/ /բաց, ազգային/	Ֆիքսված գին
4 ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական վերահսկողություն	Խորհրդատվական ծառայություններ	172 000	Խորհրդատուի որակավորման վրա հիմնված ընտրություն/CQS/	Ժամանակի վրա հիմնված
Ուսուցիչների վերապատրաստում լաբորատոր սարքավորումների օգտագործման	Խորհրդատվական ծառայություններ	60 000	Անհատ խորհրդատուի ընտրություն/IC/	Միանվագ գումար

նպատակով				
4 ավագ դպրոցների նախագծային և տեխնիկական փաստաթղթերի վերանայում և հեղինակային հսկողություն	Խորհրդատվական ծառայություններ	160 000	Որակի և գնի վրա հիմնված ընտրություն /QCBS/	Ժամանակի վրա հիմնված + Միանվագ գումար
Ճարտարագետ խորհրդատու	Խորհրդատվական ծառայություններ	11 200	Անհատ խորհրդատուի ընտրություն/IC/	Միանվագ գումար
Նախակրթարանների ուսուցիչների վերապատրաստում	Խորհրդատվական ծառայություններ	20 000	Որակավորման վրա հիմնված ընտրություն /CQS/	Ժամանակի վրա հիմնված
Վաղ զարգացման գործակցի հետազոտություն	Խորհրդատվական ծառայություններ	20 000	Անհատ խորհրդատուի ընտրություն/IC/	Միանվագ գումար
Ծրագրի բնապահպանական մասնագետ	Խորհրդատվական ծառայություններ	30 000	Անհատ խորհրդատուի ընտրություն/IC/	Միանվագ գումար
Տեխնիկական աջակցություն լաբորատոր սարքավորումների տեխնիկական հատկորոշիչների մշակման և հայտերի տեխնիկական գնատում իրականացնելու համար	Խորհրդատվական ծառայություններ	15 000	Անհատ խորհրդատուի ընտրություն/IC/	Միանվագ գումար
Կարիքների գնահատում, տեխնիկական աջակցություն ԿԿՏՀ-ի թարմացման և վիզուալիզացիոն գործիքների մշակման հարցում	Խորհրդատվական ծառայություններ	20 000	Անհատ խորհրդատուի ընտրություն/IC/	Միանվագ գումար
ԿԿՏՀ-ի նոր գործիքների փորձարկում, մշտադիտարկում և գնահատում	Խորհրդատվական ծառայություններ	20 000	Անհատ խորհրդատուի ընտրություն/IC/	Միանվագ գումար
Վերապատրաստման	Խորհրդատվական	200 000	Որակավորման վրա	Ժամանակի

մոդուլների մշակում և ԿԳՄՍՆ-ի աշխատակազմի, ուսումնական հաստատությունների ԿԿՏՀ համակարգից օգտվողների վերապատրաստումներ	ծառայություններ		հիմնված ընտրություն /CQS/	վրա հիմնված
ՆԱՀ դրամաշնորհային հայտերի գնահատում	Խորհրդատվական ծառայություններ	25 000	Անհատ խորհրդատուի ընտրություն/IC/	Միանվագ գումար
Օժանդակություն ՆԱՀ իրականացմանը	Խորհրդատվական ծառայություններ	20 000	Անհատ խորհրդատուի ընտրություն/IC/	Ժամանակի վրա հիմնված.
Ծրագրի լուսաբանում	Խորհրդատվական ծառայություններ	20 000	Անհատ խորհրդատուի ընտրություն/IC/	Միանվագ գումար
ՆԱՀ ծրագրերի աուդիտ	Խորհրդատվական ծառայություններ	50 000	Նվազագույն գնի վրա հիմնված ընտրություն/LCS/ /ազգային/	Միանվագ գումար
Ծրագրի աուդիտ	Խորհրդատվական ծառայություններ	60 000	Նվազագույն գնի վրա հիմնված ընտրություն/LCS/ /ազգային/	Միանվագ գումար

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

N	Գործողության նկարագրությունը	Նախահաշվային արժեք (ԱՄՆ դոլար) /համաֆինանսավորմամբ/	Գնման տեսակը	Ընտրության եղանակը	Պայմանագրի կնքում (նախատեսված)*	Պայմանագրի ավարտ (նախատեսված)
1	2	3	4	5	6	7
Բաղադրիչ 1. Հանրակրթության որակի բարելավում						
Ենթաբաղադրիչ 1.1. Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում						
1.1.1	Ճարտարագետ խորհրդատու	11 200	Խորհրդատվական ծառայություններ	Անհատ խորհրդատու /բաց/IC/	Հունիս, 2022	30 ամիս
1.1.2	Նախակրթարանների ուսուցիչների վերապատրաստում	20 000	Խորհրդատվական ծառայություններ	Խորհրդատուի Որակավորման վրա հիմնված ընտրություն /CQS/ /բաց, ազգային/	Հուլիս, 2023	4 ամիս
1.1.3	Վաղ զարգացման գործակցի հետազոտություն	20 000	Խորհրդատվական ծառայություններ	Անհատ խորհրդատու /բաց/IC/	Սեպտեմբեր, 2023	8 ամիս
Ենթաբաղադրիչ 1. 2. Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը						
1.2.1.1	Երևանի թիվ 139 ավագ դպրոցի կառուցում	4 500 000	Աշխատանքներ	Հայտերի ներկայացման	հնարավորինս շուտ	32 ամիս

				Հրավեր/RF B//բաց, ազգային/		
1.2.1.2	Լոռու մարզի Վանաձորի թիվ 13 ավագ դպրոցի հիմնանորոգում	3 360 000	Աշխատանքներ	Հայտերի ներկայացման Հրավեր/RF B//բաց, ազգային/	հնարավորինս շուտ	30 ամիս
1.2.1.3	Արարատի մարզի Արտաշատի թիվ 4 ավագ դպրոցի հիմնանորոգում	2 040 000	Աշխատանքներ	Հայտերի ներկայացման Հրավեր/RF B//բաց, ազգային/	հնարավորինս շուտ	20 ամիս
1.2.1.4	Արագածոտն մարզի Աշտարակի թիվ 5 ավագ դպրոցի հիմնանորոգում	2 800 000	Աշխատանքներ	Հայտերի ներկայացման Հրավեր/RF B//բաց, ազգային/	հնարավորինս շուտ	24 ամիս
1.2.2	4 ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական վերահսկողություն	172 000	Խորհրդատվական ծառայություններ	Ծորհրդատուի որակավորման վրա հիմնված ընտրություն /CQS/ /բաց, ազգային/	2022	32 ամիս
1.2.3	4 ավագ դպրոցների նախագծային և տեխնիկական փաստաթղթերի վերանայում և հեղինակային հսկողություն	160 000	Խորհրդատվական ծառայություններ	Որակի և գնի վրա հիմնված ընտրություն /QCBS/ /բաց, ազգային/	հնարավորինս շուտ	4 ամիս 32 ամիս
1.2.4	Գույքի ձեռքբերում հիմնանորոգված դպրոցների համար /հիմնված կարիքների	500 000	Ապրանքներ	Հայտերի ներկայացման Հրավեր/RF B//բաց,	Հունիս, 2024	5 ամիս

	գնահատման արդյունքների վրա/			ազգային/		

Ենթաբաղադրիչ 1.3. Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում

1.3.1	Կարիքների գնահատում, տեխնիկական աջակցություն ԿԿՏՀ-ի թարմացման և վիզուալիզացիոն գործիքների մշակման հարցում	20 000	Խորհրդատվական ծառայություններ	Անհատ խորհրդատու/IC/ բազմակի /բաց/	հնարավորինս շուտ	5 ամիս
1.3.2	ԿԿՏՀ-ի նոր գործիքների փորձարկում, մշտադիտարկում և գնահատում	20 000	Խորհրդատվական ծառայություններ	Անհատ խորհրդատու/IC/ բազմակի /բաց/	Նոյեմբեր, 2023	12 ամիս
1.3.3	Վերապատրաստման մոդուլների մշակում և ԿԳՄՆ-ի աշխատակազմի, ուսումնական հաստատությունների ԿԿՏՀ համակարգից օգտվողների վերապատրաստումներ	200 000	Խորհրդատվական ծառայություններ	Խորհրդատուի որակավորման վրա հիմնված ընտրություն /CQS/ /բաց, ազգային/	Նոյեմբեր, 2024	12 ամիս

Ենթաբաղադրիչ 1.5 Հանրակրթական դպրոցների համալրում (լաբորատոր սարքավորումներով և կահույքով)

1.5.1.1	Լաբորատոր սարքավորումների և նյութերի ձեռքբերում ՀՀ հյուսիսային տարածաշրջանի դպրոցների համար	4 000 000	Ապրանքներ	Հայտերի ներկայացման Հրավեր/RF B// բաց, միջազգային/	Ապրիլ, 2023	6 ամիս
----------------	---	-----------	-----------	--	-------------	--------

1.5.1.2	Լաբորատոր սարքավորումների և նյութերի ձեռքբերում ՀՀ հարավային տարածաշրջանի դպրոցների համար	3 885 000	Ապրանքներ	Հայտերի ներկայացման Հրավեր/RF B// բաց, միջազգային/	Ապրիլ, 2024	6 ամիս
1.5.2.1	Լաբորատոր գույքի ձեռքբերում ՀՀ հյուսիսային տարածաշրջանի դպրոցների համար	800 000	Ապրանքներ	Հայտերի ներկայացման Հրավեր/RF B//բաց, ազգային/	Ապրիլ, 2023	5 ամիս
1.5.2.2	Լաբորատոր գույքի ձեռքբերում ՀՀ հարավային տարածաշրջանի դպրոցների համար	700 000	Ապրանքներ	Հայտերի ներկայացման Հրավեր/RF B//բաց, ազգային/	Ապրիլ, 2024	5 ամիս
1.5.3.1	Համակարգչային սարքավորումների ձեռքբերում ՀՀ հյուսիսային տարածաշրջանի դպրոցների համար	800 000	Ապրանքներ	Հայտերի ներկայացման Հրավեր/RF B//բաց, միջազգային/	Ապրիլ, 2023	6 ամիս
1.5.3.2	Համակարգչային սարքավորումների ձեռքբերում ՀՀ հարավային տարածաշրջանի դպրոցների համար	700 000	Ապրանքներ	Հայտերի ներկայացման Հրավեր/RF B//բաց, միջազգային/	Ապրիլ, 2024	6 ամիս
1.5.4	Տեխնիկական աջակցություն լաբորատոր սարքավորումների տեխնիկական հատկորոշիչների մշակման և հայտերի տեխնիկական	15 000	Խորհրդատվական ծառայություններ	Անհատ խորհրդատու/IC/բաց/բազմակի	Սեպտեմբեր, 2022	24 ամիս

	գնատում իրականացնելու համար					
1.5.5	Ուսուցիչների վերապատրաստում լաբորատոր սարքավորումների օգտագործման նպատակով	60 000	Խորհրդատ վական ծառայություն ներ	Անհատ խորհրդատ ու/IC/ բազմակի /բաց/	Սեպտեմբե ր, 2023	16 ամիս

Բաղադրիչ 2. Բարձրագույն ուսումնական հաստատություններում

Նորարարությունների մրցակցային հիմնադրամի լիամասշտաբ գործարկում

2.1	ՆԱՀ դրամաշնորհային հայտերի գնահատում	25 000	Խորհրդատ վական ծառայություն ներ	Անհատ խորհրդատ ու/IC/ /բաց/ բազմակի	Հոկտեմբե ր, 2022	2 ամիս
2.2	Օժանդակություն ՆԱՀ իրականացմանը	20 000	Խորհրդատ վական ծառայություն ներ	Անհատ խորհրդատ ու/IC/ /բաց/ բազմակի	Փետրվար , 2023	24 ամիս
2.3	ՆԱՀ ծրագրերի աուդիտ	50 000	Խորհրդատ վական ծառայություն ներ	Նվազագույ ն գնի վրա հիմնված ընտրություն ն/LCS/ /ազգային/	Փետրվար, 2025	6 ամիս

Բաղադրիչ 3. Ծրագրի կառավարում

3.1	Ծրագրի աուդիտ	60 000	Խորհրդատ վական ծառայություն ներ	Նվազագույ ն գնի վրա հիմնված ընտրություն ն/LCS/ /ազգային/	Նոյեմբեր, 2023	28 ամիս
3.2	Ծրագրի լուսաբանում ¹	20 000	Խորհրդատ վական ծառայություն ներ	Անհատ խորհրդատ ու/IC/ /բաց/	Մայիս, 2022	36 ամիս

3.3	Ծրագրի բնապահպանական մասնագետ ¹	30 000	Խորհրդատվական ծառայություններ	Անհատ խորհրդատու/IC/ /բաց/	Մայիս, 2022	42 ամիս
Քաղաղրիչ 4. Արտակարգ իրավիճակների արձագանքման քաղաղրիչ (ԱԻԱԲ)						

* ենթակա է փոփոխության, քանի որ Ծրագրի մեկնարկի ամսաթիվը դեռ պարզ չէ

¹ Կրթության բարելավում ծրագրում կան մասնագետներ նշված հաստիքների համար /ընտրված Անհատ

խորհրդատուների ընտրության մրցութային կարգով/ և գործող ծրագրի առանց ընդհատման երկարացման դեպքում

ԿԾԿ ԾԻԳ-ը կշարունակի/կերկարաձգի մասնագետների հետ կնքված գործող պայմանագրերի

վերջնաժամկետները:

**ԾԳՌՓ-ի ամփոփ նկարագիր՝ աջակցելու Բանկի կողմից Ծրագրի Գնահատման
Փաստաթղթի պատրաստմանը**

Կրթության բարելավման ծրագրի շրջանակներում ներդրումային ծրագրերի ֆինանսավորման վարկառուների համար գնումները կիրականացվեն Համաշխարհային բանկի Գնումների կանոնակարգերի համաձայն՝ Գնումների Կանոնակարգեր Ներդրումային ծրագրերի ֆինանսավորման (IPF) վարկառուների համար թվագրված հունիս 2016, վերանայված նոյեմբեր 2017, օգոստոս 2018 և նոյեմբեր 2020// և համապատասխան մրցութային փաստաթղթերի օրինակելի ձևերը, որոնք հասանելի են առցանց և թարմացված, հարմարեցված առանձին դեպքերում գնումներին՝ հիմնված ԾԳՌՓ-ի -ում նշված հատուկ դեպքերի համար նախատեսված փաստաթղթերի վրա, օրինակ՝ ցածր արժեք, ցածր ռիսկային գործողություններ և կրիտիկական գործողություններ: Չնայած ԿԾԿ-ն ունի բավարար գիտելիքներ և փորձ ունեցող գնումների մասնագետ, ԾԳՌ-ի գնումների թիմը կհամալրվի՝ ժամկետները պահպանելու և նախատեսված գործողությունների պատշաճ իրականացումն ապահովելու համար: Հարկ է նաև նշել, որ մեր օրերում շուկաները շատ անկայուն են, և ռիսկերն անկանխատեսելիորեն փոխվում են:

Հաշվի առնելով աշխարհում ընթացող փոփոխությունները՝ ընդհանուր առմամբ պարզ է դառնում, որ շուկաներում անորոշությունը շատ բարձր է, ուստի Ծրագրի իրականացման ընթացքում նպատակներին հասնելու համար լավագույն լուծումը և ռազմավարությունը համապատասխան շուկաներում յուրաքանչյուր մրցույթի ժամանակ առկա իրավիճակի վրա հիմնված որոշումներ կայացնելն է: